ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 lusinmat001@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

14 հուլիսի 2021 թվականի թիվ 48

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿԻՆ,ՄԱՐԶԻՉԻՆ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ,«ԷՏՅՈՒԴ» ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետի,18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 20-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետը՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի վարչական բյուջեի պահուստային ֆոնդի Բաժին 10 Խումբ 7 Դաս 1 «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» 4727 հոդվածով հատկացված գումարներից դրամական աջակցություն տրամադրել՝

1.Բռնցքամարտի մինչև 22 տարեկանների Եվրոպայի առաջնության արծաթե մեդալակիր՝ Ախուրյան համայնքի Բասեն բնակավայրի բնակիչ ՝ Համբարձում Արթուրի Հակոբյանին 200000/երկու հարյուր հազար/ դրամ, մարզիչ Արտավազդ Գևորգյանին՝ 100000/մեկ հարյուր հազար/ դրամ:
2.«Հայոց պատմություն» առակայի օլիմպիադայի եզրափակիչ փուլի մասնակից/ 2-րդ կարգի դիպլոմ/ Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի բնակիչ Զոյա Հայկի Ռուշանյանին՝ 30000/երեսուն հազար/ դրամ, հայոց պատմության ուսուցչուհի Արուսյակ Գառնիկի Մաթևոսյանին 15000 /տասնհինգ հազար/ դրամ:
3.«Էտյուդ» նկարչության, ասմունքի և թատերարվեստի հանրապետական մրցույթ-փառատոնի մասնակիցներ՝
1) 2-րդ մրցանակակիր Ռիտա Հովհիկյանին /15-18 տարիքային խումբ/ 15000 /տասնհինգ հազար/ դրամ
2) 3-րդ մրցանակակիր Աիդա Ղարիբյանին /15-18 տարիքային խումբ/ 15000

/տասնհինգ հազար/ դրամ
3) 2-րդ մրցանակակիր Աիդա Թորոսյանին /8-10 տարիքային խումբ/ 15000 /տասնհինգ հազար/ դրամ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ֆ.ԱՆՏՈՆՅԱՆ

Ժ. ԳԱԲՈՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Վ. ԷԼԲԱԿՅԱՆ

Ա. ՀԱՄԻԿՅԱՆ

Տ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հ.ՄԱԹՈՍՅԱՆ

Մ.ՄՆԱՑՅԱՆ

Ա.ՄՔՈՅԱՆ

Գ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

2021թ. հուլիսի 14
գ. Ախուրյան